Արձանագրություն N 3

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար դարակաշարերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

03 հուլիսի 2026 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Էդգար Մխիթարյանը, անդամներ՝ Գոռ Գևորգյանը, Արմեն Այվազյանը, Մագդա Կարապետյանը, Մարտին Ղանդիլյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/8 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Էդգար Մխիթարյանը նիստը հայտարարեց բացված:

Հանձնաժողովը ուսումնասիրեց և պարզեց, որ ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ-ն և Ամբա Գրուպ-1 ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում և կարգով շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի անդամների կողմից իրականացվեց հայտերի գնահատում, որի արդյունքում ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ-ի և Ամբա Գրուպ-1 ՍՊԸ-ի հայտերը գնահատվեցին բավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց

- 1-ին-ից 6-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից նույն չափաբաժինների մասով:
- 7-րդ չափաբաժնի մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից Ամբա Գրուպ-1 ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից նույն չափաբաժնի մասով:
- անգործության ժամկետն ավարտվելուց հետո ՅՈՒՐԻ ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՅԻԿԻ Ա/Ձ-ին և մասնակից Ամբա Գրուպ-1 ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ առաջարկելով ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Էդգար Մխիթարյան
անդամներ	_____	Գոռ Գևորգյան
	_____	Արմեն Այվազյան
	_____	Մագդա Կարապետյան
	_____	Մարտին Ղանդիլյան
քարտուղար	_____	Սպարտակ Հարությունյան